ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ 1914—1917 ԹԹ. ՆՎԱՃՎԱԾ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՑԱՐԻԶՄԻ ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1914—1917 թթ. կովկասյան ռազմաճակատում ծավալված ռազմական գործողությունների հետևանքով ռուսական բանակը գրավել էր օսմանյան կայսրության և Պարսկաստանի տերիտորիաների մի մասը, այդ թվում նաև համարյա ամբողջ Արևմտյան Հայաստանը։ 1916 թ. վերջերին ռուսների ձեռքում էին գտնվում Սև ծովի ափերը՝ Բաթումից մինչև Ռիզե, Տրապիզոն, Էլլեու, այնուհետև սահմանն անցնում էր դեպի հարավ՝ Գյումուշխանա, Երզնկա, Արևմտյան Եփրատի ափերը, Մամախաթունից հարավ՝ մոտ 100 կմ մինչև Արևելյան Եփրատ, Մուշ, Բիթլիս, Վանա լճի հարավային ափերը մինչև Ուրմիա, Ռևանդուզ և այլն։

Խոշոր վարչական կենտրոններ Տրապիզոնը, Էրզրումը, Վանը և այլն փաստորեն մնացել էին գործող բանակի խոր թիկունքում։ Ռուսական բանակի գրաված տերիտորիան իր չափով ավելի մեծ էր, քան այժմյան Հայկական ՍՍՀ և Վրացական ՍՍՀ միասին վերցրած։

Ռուսական կովկասյան բանակը, հաղթահարելով թշնամու դիմադրությունը, խափանելով Կովկաս ներխուժելու նրա պլանները, փայլուն հաղթանակներ է տանում Սարիղամիշի, Դիլմանի, Էրգրումի, Երզնկայի, Բիթլիսի, Մուշի և մի շարք այլ ճակատամարտերում։ Թվում էր, թե ցարիզմի նվաճողական պլանների իրագործումը Մերձավոր Արևելքում մոտենում էր իր վախճանին։ Անշուշտ, օրակարգից չէին հանված նեղուցների գրավումը և դեպի Մոսուլ շարժվելու պլանները, սակայն ներքին ու արտաքին կարգի մի շարք լուրջ հանգամանքներ արգելակում էին դրանց իրականացմանը։ Ցարական կառավարությունը բոլորովին մտադիր չէր թողնելու գրաված տերիտորիաները, ընդհակառակը, նա այդ բոլորը դիտում էր որպես իր կայսրության ապագա անբաժան մասը, և պատերազմի հենց առաջին օրերից ձեռնամուխ էր եղել գրաված շրջանների ռազմական, վարչական, տնտեսական և քաղաքական կյանքում որոշակի կարգ ու կանոն մտցնելուն՝ Ռուսաստանում գործող օրենքների ոգուն համապատասխան։

Սույն հոդվածի նպատակն է հակիրճ կերպով լուսաբանել ցարական կառավարության ձեռնարկած մի շարք միջոցառումների էությունը, ցույց տալ այն սկզբունքները, որ բանակի հրամանատարությունը և պետական ղեկավարման կենտրոնական օրգանները մշակել էին գրաված շրջանները կառավարելու համար։[1]

---

[1] *Այս հարցը մասնակիորեն քննության է ենթարկված Ե. Ղ. Սարգսյանի «Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում» գրքում, Երևան, 1964 (տե՛ս նաև Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965,*

1. ՀԱՐՅՈՒՐԱՊԵՏ ՆԱԼԲԱՆԴԻՇԵՎԻՑ ՄԻՆՉԵՎ ԴԵՆԵՐԱԼ ՅՈՒԴԵՆԻՉԸ

Ռուսական կայսրության տերիտորիայի հետզհետև ընդարձակումը արևմուտքում, արևելքում և հարավում զուգակցվում էր նվաճված երկրամասերի կառավարման համար համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու հետ։

Ցարիզմի քաղաքականությունը գրաված երկրամասերում իր հիմքում ուներ մեկ գլխավոր սկզբունք՝ բոլոր հնարավոր միջոցներով ամրանալ նվաճած վայրերում, տնտեսական օգուտ քաղել, բարելավել կայսրության ընդհանուր ռազմա-ստրատեգիական վիճակը, այլազգիներին ստիպել անառարկելիորեն ճանաչել ցարական կարգերը, դաժան միջոցներով ճնշել կենտրոնախույս ուժերը, ազգային-ազատագրական շարժումները և ապահովել կայսրության միասնականությունը, նրա տերիտորիալ ամբողջականությունը։ Լեհաստանում, Ֆինլանդիայում, Մերձբալթյան երկրներում, Միջին Ասիայում, հեռավոր Արևելքում ու Կովկասում ցարիզմի կառավարման մեթոդների միջև կային որոշակի առանձնահատկություններ ու տարբերություններ և դա միանգամայն տրամաբանական էր։ Կայսրության զեկավար շրջաններում չէին կարող հաշվի չառնել այդ երկրների ժողովուրդների զարգացման ընդհանուր մակարդակը և ազգային ավանդույթները, իսկ երբեմն նաև մյուս տերությունների դիրքը։

Ի տարբերություն արևմտյան տերությունների գաղութային տիրապետությունների ընդհանուր սիստեմի ռուսական ցարիզմը տերիտորիալ առումով ուներ մեկ շոշափելի առավելություն։ Այն ժամանակ, երբ Անգլիայի ու Ֆրանսիայի գաղութները ցրված էին ամբողջ աշխարհով մեկ, Ռուսաստանի բոլոր գրաված երկրները աշխարհագրական տեսակետից հանդիսանում էին նրա բուն տերիտորիայի մի տեսակ շարունակությունը։

Կովկասյան փոխարքայությունն այն հզոր օղակներից մեկն էր, որի միջոցով ցարական կառավարությունը իրականացնում էր իր քաղաքականությունը ոչ միայն Կովկասում, այլև գրաված նոր շրջաններում։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Ռուսաստանին միացվեցին Բաթումի, Կարսի և Արդահանի մարզերը։ Ցարական ռազմական ու դիվանագիտական շրջաններում այդ հաջողությունները դիտվում էին որպես նախապայման՝ հետագայում դեպի ասիական Թուրքիա և Միջագետք թափանցելու համար։ Սակայն նվաճելը հարցի միայն մի կողմն էր, կարևորը նվաճածը պահելն ու այնտեղ ամրապնդվելն էր։ Իսկ ինչպե՞ս, ի՞նչ ուղիներ ու նախագծեր կային այդ ուղղությամբ։

Ամենանպատակահարմար միջոցը համարվում էր համապատասխան քանակությամբ կադրային բանակի, ոստիկանական զորքերի առկայությունն ու չինովնիկական ապարատի ստեղծումը տեղում։ Բայց առավել մեծապետական տարրերը նման միջոցները համարում էին ոչ ձեռնտու և թերի։ Զորքը թանկ է նստում պետական գանձարանին, ոչ բոլոր չինովնիկներն են (մանավանդ տեղացիները) վստահելի։ Դոնի, Թերեքի, Ուրալի կողակության ստեղծման փորձը հիշյալ տարրերի կողմից դիտվում էր որպես առավել ձեռնտու միջոց։ Այդ տեսակետից շատ հետաքրքրական է 2-րդ Ասատրխանյան գնդի հար-

---

С. М. Акопян, Западная Армения в планах империалистических держав, Ереван, 1967. *Մ. Արզումանյան, Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և նրա մերկացումը բոլշևիկյան կուսակցության կողմից, «Բաներ Հայաստանի արխիվներից», N 2, Երևան, 1967։ Լ. Ն. Թուրքահայ դաշտավարությունը, մաս 2, Փարիզ, 1932)։*

յուրապետ Նասլեդիշևի 1877 թ. նոյեմբերի 24-ի նամակը ցարին[2]։ Ըստ Նասլեդիշևի նոր նվաճած երկրամասերը կենտրոնական մարզերից կողակությամբ բնակեցնելը ունի հետևյալ առավելությունները. նախ՝ ռուս կողակությունը, տիրելով հողին, ոչ միայն ամրանում ու պաշտպանում է այն, այլև հակված է նաև ընդարձակելու իր հողամասը հարևան ժողովրդի կամ պետության հաշվին։ Երկրորդ՝ կողակությունը փաստորեն փոխարինում է զորքին։ Երրորդ՝ հիմք է ստեղծվում գրաված երկրամասի ու ժողովրդի ռուսացման համար։ Ահա մի քանի մեջբերումներ Նասլեդիշևի զեկուցագրից.

«Ռուսաստանի սահմանների ընդարձակմանը զուգընթաց անմիջապես ստեղծվել են կողակային նոր գոտիներ, նոր գրաված երկրամասերի զարգացման ու ռուսացման համար»[3]։ Եթե կողակություն չստեղծվի գրաված վայրերում, ըստ հարյուրապետ Նասլեդիշևի, Ռուսաստանը կարող է ունենալ «թաթարական, հայկական, պարսկական նահանգներ, բայց ոչ ռուսական»[4]։ Այնուհետև նա նկարագրում է համարյա ամբողջ Արևմտյան Հայաստանի և կից շրջանների աշխարհագրական պայմանները, հողի բերրիության աստիճանը, ժողովուրդների կազմը և առաջարկում է այն կարգը, որ պիտի սահմանվի գրաված շրջանների համար կենտրոնական նահանգներից ռուս բնակիչներ հավաքագրելու գործում։ Ընդ որում, չի խորշում առաջարկելու, որ նման հավաքագրման ժամանակ չպետք է կանգ առնել նույնիսկ հարկադրական միջոցների առաջ։

Պետք է ենթադրել, որ Նասլեդիշևը մենակ չէր իր այդ տեսակետներով։ 47 տարի նրանից հետո, 1915 թ., երբ ռուսական զորքերը գրավել էին Ալաշկերտի հովիտը, ամրացել Էրզրումի մատույցներում, տիրել Իրանական Ադրբեջանի զգալի մասին, ցարական կառավարության գործիչները նորից աշխույժ քննության առարկա են դարձնում կովկասյան բանակի գրաված և գրավելիք շրջաններում իրենց քաղաքականության սկզբունքային հարցերը։ 1915 թ. փետրվարի 28-ին հողագործության մինիստր Կրիվոշեինը արտաքին գործերի մինիստր Սազոնովին ուղղած նամակում շարադրում է իր մինիստրության մտահղացումները կովկասյան բանակի գրաված շրջանների յուրացման մասին[5]։

«Թուրքական ռազմաճակատում մեր բանակի հաջող գործողությունների հետևանքով,— գրում է Կրիվոշեինը,— պետք է ենթադրել, որ շատ թե քիչ մոտիկ ապագայում հնարավոր կդառնա կովկասյան սահմանների ուղղումը և մեր տիրապետությունների կլորացումը Փոքր Ասիայում ու Հայաստանում»[6]։ Կրիվոշեինը գրաված նոր տիրապետությունները բաժանում է հետևյալ 4 գոտիների՝ ա) Սև ծովի ափերը, բ) Արաքսի ու Եփրատի վերին հոսանքները, գ) Պարսկաստանի սահմանին կից տերիտորիաները և դ) Կասպից ծովի հարավային ափերը, Գիլանը և Մազանդարանը[7]։ Հողագործության մինիստրը նկարագրում է այդ գոտիներից յուրաքանչյուրի աշխարհագրական, կլիմայական պայմանները, բնական հարստությունները և համապատասխան առաջարկու-

2 Տե՛ս ЦГА Груз. ССР, ф. 1438, оп. 1, д. 681, л.л. 1—9.
3 Նույն տեղում, թ. 2.
4 Նույն տեղում։
5 Տե՛ս «Раздел Азиатской Турции», сборник документов. М., 1924.
6 Նույն տեղում, էջ 360։
7 Նույն տեղում, էջ 361։

Թյուններ անում նրանց յուրացման ու շահագործման մասին։ 1916 թ. մարտի 12-ին Կրիվոշեինը երկրորդ անգամ է դիմում Սազոնովին։ Հայտնի է, որ փետրվարի 3-ին Էրզրումը հերոսական գրոհով գրավվել էր ռուսների կողմից։ Ռուսական բանակն առաջ էր շարժվում դեպի արևմուտք ու հարավ։ Փաստորեն Արևմտյան Հայաստանի տերիտորիայի հիմնական մասն ազատագրված էր թուրքերից։ Գրաված շրջաններում ռուսական պետականության հաստատման հարցը հրատապ բնույթ էր ստացել։

Սազոնովին գրած իր այս երկրորդ նամակում Կրիվոշեինը անհանգստություն է հայտնում, որ գրաված հողերը կարող են ընկնել պատահական, սպեկուլյատիվ տարրերի ձեռքը, ուստի առաջարկվում է «անհապաղ ձեռնամուխ լինել պարզելու հողային վիճակի հարցը Արևմտյան Հայաստանում»[8]։ Նա կոնկրետ առաջարկություն է մտցնում՝ երկու մինիստրությունների գործին ծանոթ աշխատակիցներից կազմել խառը հանձնաժողով, տեղում հարցերն ուսումնասիրելու և համապատասխան հրահանգների նախագծեր կազմելու համար։

Մյուս կարևոր փաստաթուղթը, ուր ամենայն պարզությամբ ու հետևողականությամբ շարադրված են ցարական կառավարության քաղաքականության ընդհանուր սկզբունքները կովկասյան բանակի կողմից գրաված շրջաններում՝ կազմված է արտաքին գործերի մինիստրությունում[9]։ Դատելով ոճից ու հարցադրումների տոնից, կասկած չի մնում, որ այն կազմված է Սազոնովի կողմից։ Այդ փաստաթղթում ամենայն որոշակիությամբ ընդգծված է, որ սկսած Պետրոս I-ի ժամանակից ռուսական կայսրությունը քայլ առ քայլ ձգտում է ազատ ծովագնացության հաստատմանը իր հարավում և ամրանալով նախ Ազովում, ապա Սև ծովի հյուսիսում, այժմ ընդհուպ մոտենում է իր մշտական երազանքին՝ նեղուցներին[10]։ Փաստաթղթում նշվում է, որ Թուրքիայի կենտրոնախույս ուժերից Ռուսաստանի համար ամենահավատարիմ տարրը հայերն են։

Հասկանալի պատճառով, գրաված շրջանների հետագա վիճակի հարցում անհանգստություն էին ցուցաբերում նաև իրենք, զորամասերի հրամանատարները։ Դրանցից մեկը կովկասյան բանակի հրամանատար գեներալ Ն. Ն. Յուդենիչն էր, որը Վորոնցով-Դաշկովին գրած իր հայտնի զեկուցագրում (1915 թ. ապրիլի 5-ին) մատնանշելով ձիերի կերի պակասը և այն դժվարությունները, որ փոխադրամիջոցի վատ վիճակի հետևանքով ստեղծվել էր բանակի մատակարարման գործում, առաջարկում է անհապաղ ձեռնամուխ լինել Ռուսաստանի կենտրոնական նահանգներից որոշակի թվով ռուսներ հավաքագրելուն և գրաված շրջանները փոխադրելուն, որոնք և տեղում կապահովեին բանակի մատակարարման հետ կապված հարցերը։ Ըստ Յուդենիչի, այդ նույն մարդիկ, ծանոթանալով նոր վայրերի պայմաններին, իրենց մշտական բնակավայրերը վերադառնալուց հետո պետք է լայն աշխատանք ծավալեն բնակչության մեջ, հետագայում ավելի մեծ զանգվածներով Արևմտյան Հայաստանի՝ թուրքերի ու քրդերի կողմից լքած բնակավայրերը տեղափոխվելու օգտին։ Յուդենիչի առաջարկները փաստորեն նորություն չէին։ Դա Նասլեդիշևի առա-

---

[8] АВП России «Политархив», ф. 3486, թ. 2։
[9] Նույն տեղում, ֆ. 3480, թ. 25։
[10] Նույն տեղում, թ. 26։

ջարկները գործնականում իրագործելու մի նոր դրսևորում էր պատմական նոր ժամանակաշրջանում։

Թե ինչո՞ւ, ո՞չ անցյալ դարավերջում և ո՞չ էլ առաջին համաշխարհային պատերազմի շրջանում ռուս-թուրքական կովկասյան սահմանում կողակցություն չստեղծվեց, բացատրվում է նրանով, որ երկու դեպքում էլ արտաքին ու ներքին անբարենպաստ հանգամանքներն անհնար էին դարձնում այդ։

Ցարական կառավարության պաշտոնական վավերագրերում բազմիցս խոսվում է նաև ազգային հարաբերությունների մասին Կովկասում և շոշափվում ցարական կառավարության վերաբերմունքը դեպի նոր նվաճված երկրամասերի տարբեր ժողովուրդներն ու ազգերը։ Մինչև Նիկոլայ Նիկոլաևիչի Կովկասի փոխարքա նշանակվելը (1915 թ. օգոստոս) կառավարությունը տանում էր հայերին հովանավորելու քաղաքականություն։ Արտգործմինիստրության փաստաթղթերից մեկում այդ ընդհանուր գաղափարը ձևակերպված է հետևյալ կերպ. «Խոսելով գերմանա-թուրքական հայաչջջ քաղաքականության էության մասին, արտգործմինիստրությունը գտնում է, որ Ռուսաստանի պլանը պետք է լինի ուղղակի նրանց պլանի հակառակը։ Եթե գերմանացիներին ու թուրքերին Հայաստանը պետք է առանց հայերի, եթե նրանց անհրաժեշտ է հայկական սեպի ոչնչացումը մուսուլմանական աշխարհի մեջ, եթե նրանք ցանկանում են ոչնչացնել մեր և մուսուլմանական-քրդական աշխարհի միջև ընկած արգելակը, ապա Ռուսաստանի խնդիրն է ինչ գնով էլ լինի վերաստեղծել այդ հայկական սեպ-արգելակը թուրքերի ու քրդերի և մեր թաթարների միջև։

Հայկական բնակչության պահպանումը անհետաձգելի խնդիր է»[11]։ Հենց նման հարցադրումից ելնելով էլ պահանջում էր ամեն տեսակի օգնություն հայ գաղթականությանը, որը և պատերազմի ծանր տարիներին, թեկուզ մեծ դժվարություններով ու թերի, այնուամենայնիվ կատարվում էր։

2. ԱՐՏԳՈՐԾՄԻՆԻՍՏՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՓՈԽԱՐՔԱ ՆԻԿՈԼԱՅ ՆԻԿՈԼԱԵՎԻՉԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Նախապատերազմյան շրջանում Արևմտյան Հայաստանում անցկացվելիք ռեֆորմների հարցը սերտորեն կապված է Սազոնովի անվան հետ։ 1915 թ. օգոստոսի 15-ին, երբ Նիկոլայ II-ը իր ձեռքը վերցրեց գործող բանակի գերագույն գլխավոր զորահրամանատարի պաշտոնը, Նիկոլայ Նիկոլաևիչ Ռոմանովը, այդ պաշտոնից ազատվելով, նշանակվեց Կովկասի փոխարքա և կովկասյան ռազմաճակատի գլխավոր զորահրամանատար։ 1916 թ. հունիսի 14-ին Սազոնովը Նիկոլայ Նիկոլաևիչին հատուկ նամակով պարզաբանում է, որ Էրզրումի, Տրապիզոնի, Երզնկայի, Բիթլիսի և մյուս վայրերի գրավման կապակցությամբ կենտրոնական կառավարության կողմից մշակվել և ցարին է հանձնվել ժամանակավոր կանոնադրություն՝ նշված երկրամասերի կառավարման համար, իսկ մինչ այդ, հարկ է համարում տալ միայն ընդհանուր կարգի ցուցումներ։ Արտգործմինիստրը այդ նամակում խոստովանում է, որ ամենագրժվարինը նոր գրաված շրջանների կառավարման հարցում «հայկական հարցի որոշումն է»[12]։

---

11 Նույն տեղում, թ. 29։
12 Նույն տեղում, թ. 31։

Սազոնովը նշում է, որ Ռուսաստանի շահերին չի համապատասխանում ոչ հայերին ավտոնոմիա տալը և ոչ էլ նրանց մուսուլմանների ողորմածությանը հանձնելը։ Նա իհարկե անկեղծ չէր իր գործելակերպում, քանի որ ավտոնոմիայի բացառումը պատճառաբանում էր նրանով, որ հայերը իբր թե գրաված վիլայեթներում մեծամասնություն չեն կազմում և բացի այդ, մինչև պատերազմի վերջնական ելքը դաշնակիցները թույլ չեն տա միակողմանիորեն լուծելու Արևմտյան Հայաստանի տերիտորիայի և մանավանդ Կիլիկիայի բախտը։

Պետք է ասել, որ հայկական բնակչության քանակի հարցը միշտ էլ վիճի առարկա է եղել այն պարզ պատճառով, որ Թուրքիան երբեք ճիշտ վիճակագրական տվյալներ չի ունեցել և չի ցանկացել ունենալ։ Կային վիլայեթներ, ուր հայերը բացարձակ մեծամասնություն էին կազմում։ Սակայն հայտնի է, որ մշտական հալածանքների հետևանքով հայերը գաղթում էին ուր կարող էին, բայց բավական էր քիչ թե շատ տանելի պայմանների առկայությունը, որպեսզի նրանք կենտրոնանային և կառչեին իրենց ծննդավայրերին։ Սազոնովի փաստարկումը 6 վիլայեթներում հայերի փոքրամասնություն լինելու մասին անհիմն է։ Սակայն ի՞նչ է առաջարկում նա։ «Խիստ կերպով ղեկավարվել օրինականության, արդարության և անկողմնակալության սկզբունքներով դեպի բոլոր ցեղերն ու տարրերը, չհակադրելով նրանց իրար և բացառիկ հովանավորություն չստեղծելով մի ցեղի համար ի վնաս մյուսի։ Այդպիսի դեպքում հնարավոր կլինի հայերին որոշակի շրջաններում տալ ինքնուրույնություն դրպրոցական, եկեղեցական գործերում, վանքապատկան ու եկեղեցական կապիտալի տնօրինության, լեզվից օգտվելու իրավունքի, ինչպես նաև գյուղական ու քաղաքային ինքնակառավարման և ընտրության ժամանակ տոկոսային հարաբերության նորմաների պահպանման գործում»[13]։ Արտգործմինիստրը խորհուրդ է տալիս փոխարքային ձեռքից-ձեռք անցած հողերը, այգիները, տները վերադարձնել իրենց իսկական տերերին կամ նրանց ժառանգներին[14]։

Ի դեպ նշենք, որ նման թեզը բազմիցս կրկնվում է նաև մյուս պետական-ռազմական գործիչների գրագրություններում։

Փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչ Ռոմանովը իր պատասխան նամակում[15] հավանություն է տալիս Սազոնովի առաջարկություններին. նա նշում է, որ ծայրահեղ անհրաժեշտություն է գրաված շրջանները ռուսական կայսրությանը կցելը, իսկ ինչ վերաբերում է հայկական հարցին, ապա նա գրում է. «Հայկական հարցը ներկայումս գոյություն ունեցող ռուսական կայսրության սահմաններում ըստ իմ խոր համոզման բոլորովին բացառվում է և հարկ չկա անգամ հիշատակելու դրա մասին, քանի որ փոխարքայության սահմաններում ռուսահպատակ հայերը հանդիսանում են ռուսահպատակ մուսուլմաններին, վրացիներին և ռուսներին համահավասար քաղաքացիներ»[16]։

Այնուհետև մեծ իշխան Նիկ. Նիկոլաևիչը այն համոզումն է հայտնում, որ Հայկական հարցը նոր գրաված վայրերում նույնպես պետք է որոշվի այնպես, ինչպես Կովկասում։ Բոլորը պետք է հավասար լինեն օրենքի առաջ, ան-

13 АВП России, ф. «Политархив», д. 3466, թ. 13։
14 Նույն տեղում, թ. 14։
15 Նույն տեղում, письмо № 21083 от 3.7 1916 г.
16 Նույն տեղում, թ. 16։

կախ նրանց ազգային պատկանելությունից։ Հենց այդ նպատակն է հետապնդում նրա այնքան աղմուկ հանած № 121 հրամանը (տրված 1916 թ. մարտի 19-ին)[17]։ Այդ հրամանով պահանջվում է վերջ տալ անարխիային, կամայական ուրիշների հողերին կամ ունեցվածքին տիրանալուն։ Փոխարքան հիշեցնում է, որ պատերազմական գործողությունները ավարտելուն պես անօրինական կարգով ուրիշի հողերին, այգիներին տիրացած մարդկանց, անկախ ազգային պատկանելությունից, ուժով կստիպվի այդ բոլորը վերադարձնել տերերին կամ պետության տեղական օրգաններին[18]։

Այս և նման բազմաթիվ պաշտոնական դրագրություններից դժվար չէ եզրակացնել որ, առհասարակ հայկական ավտոնոմիայի մասին ոչ մի լուրջ խոսք կառավարական շրջաններում չկար։ Նիկոլայ Նիկոլաևիչը, Սազոնովը, Կրիվոշեինը և մյուսները այլ կերպ կվարվեին, եթե նրանք չլինեին միապետական երկրի գործիչներ, բայց քանի որ նրանք ցարիզմի հավատարիմ ծառաներն էին և ձգտում էին նրա ամրապնդմանն ու կայսրության տիրապետությունների ընդարձակմանը, պարզ է, որ ամենից առաջ պետք է վերջ տային անարխիային, տարրական պետականություն ու օրինականություն հաստատեին գրաված շրջաններում։ Ավելին պահանջելը ուտոպիա էր։

3. ԳՐԱՎԱԾ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

1916 թ. հունիսի 5-ին կայսր Նիկոլայ II-ը հաստատեց «Временное положение об управлении областями Турции, занятыми по праву войны».

Համաձայն այդ կանոնադրության, Ասիական Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի ռուսական զորքերի կողմից գրաված շրջանների ընդհանուր ղեկավարման համար ստեղծվում էր ժամանակավոր ռազմական գեներալ-նահանգապետություն, գեներալ-նահանգապետի գլխավորությամբ։ Գեներալ-նահանգապետը ենթարկվում էր Կովկասի փոխարքային։ Նահանգապետության կենտրոնական ղեկավար օրգաններն էին՝ 1. Գեներալ-նահանգապետի շտաբը, 2. գրասենյակը, 3. ռազմա-սանիտարական վարչությունը, 4. ռազմա-անասնաբուժական վարչությունը, 5. տեխնիկական բաժինը, 6. հարկային վարչությունը, 7. վերահսկիչ վարչությունը, 8. լեռնային մասի վարչությունը։

Գրաված նոր շրջանները բաժանվել էին հետևյալ 4 մարզերի՝

ՎԱՆԻ ՄԱՐԶ — Ընդգրկում էր Վանի վիլայեթի նախկին սահմանները, Բայազետի և Դիադինի օկրուգները մինչև Տիշլի-չայ գետն արևմուտքում։ Մարզի բնակչության թիվը հասնում էր 52000-ի։ Այն փաստը, որ Վանի մարզը գտնվում է Թուրքիայի և Պարսկաստանի քրդաբնակ շրջանների միջև, պահանջվում էր հատուկ ուշադրություն դարձնել այդ շրջանի վրա։

ԽՆՈՒՍԻ ՄԱՐԶ — Ընդգրկում էր իր մեջ նախկին Բայազետի օկրուգի արևմտյան մասը, Տիշլի-չայից դեպի արևելք, Խնուսի կազան և Բիթլիսի վիլայեթի ռուսական զորքերի կողմից գրավված շրջանները։ Բնակչության թիվն էր 39000 մարդ։

---

17 Նույն տեղում, թ. 17։
18 Նույն տեղում

ԷՐԶՐՈՒՄԻ ՄԱՐԶ — Ընդգրկում էր նախկին Էրզրումի վիլայեթը առանց Բայազետի օկրուգի արևմտյան մասի, և Խնուսի կազան, առանց Թորթումի, Մելոյի, Իսպիրի և Բայբուրթի օկրուգների։ Բնակչության թիվը՝ 106000։ Այդ մարզին տրվում էր հատուկ նշանակություն՝ ելնելով նրա աշխարհագրական դիրքից։ Կովկասյան բանակի շտաբը ևս, սկսած 1916 թ. փետրվարից, տեղավորված էր Էրզրումում։

ՊՈՆՏՈՍԻ ՄԱՐԶ — Ընդգրկում էր Տրապիզոնի արևելյան մասը (որ գրավված էր ռուսական զորքերի կողմից), Խոմուրշյանի, Ռիզեի և Ատտինեի օկրուգները, Էրզրումի վիլայեթի հյուսիսային մասը՝ այն է Բայբուրթի, Խոպերի, Մելոյի և Թորթումի օկրուգները։ Բնակչության թիվն էր 170000 մարդ։

Մարզերի միջև եղած սահմանների ճշտումը կատարվում էր փոխարքայի կողմից, գեներալ-նահանգապետի առաջարկով։

Բոլոր 4 մարզերը 1916 թ. վերջին բաժանված էին հետևյալ 29 օկրուգների, որոնց գլուխ կանգնած էին օկրուգի պետերը[19] (որպես կանոն՝ ռուս զինվորականներ) — Ռիզեի, Խոմուրշյանի, Մելոսի (Ճորոխի), Ղարաքիլիսայի, Աթինի, Բայազետի, Վանի, Թորթումի, Դիադինի, Ալաշկերտի, Էրզրումի, Հասանկալայի, Խորասանի, Իդի, Բերկրիի, Աշկալայի, Մամախաթունի, Բայբուրթի, Մասսադի, Սարայի, Իսպիրի, Դյոթթջանի, Վերին Արաքսի, Խնուսի, Դատախի, Մանազկերտի, Արճեշի, Բաշկալայի և Խոշաբի։

Օկրուգները բաժանվում էին տեղամասերի, որոնց գլուխ պիտի կանգնած լիներ տեղամասի պետը։

Համաձայն ժամանակավոր կանոնադրության, վերոհիշյալ նորաստեղծ վարչական օրգանների հիմնական պարտականությունն էր ամենից առաջ «կարգ ու հանգստություն սահմանելը, բնակչության կյանքի, պատվի, ունեցվածքի, կրոնական ու քաղաքացիական ազատության պահպանումը և վերջիններիս իրավահավասարությունը ռուսական կառավարության առաջ՝ անկախ ազգից ու ցեղից, ինչպես նաև խաղաղ աշխատանքի ապահովումը ռուսական կայսրությանը անառարկելիորեն հպատակվելու հիման վրա»[20]։

Իրենց բնակավայրերը լքած բնակիչների ունեցվածքը բռնագրավվում էր և համարվում պետական սեփականություն։

Ժամանակավոր կանոնադրության հիման վրա մշակվեցին համապատասխան հրահանգներ կառավարման բոլոր օղակների համար։ Այդ հրահանգներում նշվում էին կառավարման յուրաքանչյուր օղակի իրավական սահմաններն ու պետերի պարտականությունները։

Պարզաբանման համար համառոտակիորեն կանգ առնենք դրանց վրա։

ա) Օկրուգները և նրանց պետերի պարտականությունները — օկրուգը վարչական բաժանման հիմնական օղակն էր, որի միջոցով իրականացվում էին համարյա բոլոր կարևոր միջոցառումները ռուսական պետականության ամրացման համար։ Օկրուգի պետը իրավունք ուներ՝

1) Երկու շաբաթ ժամանակով մեկուսացնել բոլոր կասկածելի կամ վստահություն չներշնչող բնակիչներին։

---

19 Տեղեկությունները հաղորդվում են համաձայն ա) ЦГВИА, ф. 2168, оп. 1, д. 268 և բ) ЦГА Груз. ССР, ф. 520, оп. 1, д. 216.

20 ЦГВИА, ф. 2168, оп. 1, д. 268, л. 20.

2) Կարգադրել խուզարկության ենթարկել բոլոր (առանց բացառության) շենքերը, բնակարանները, եթե նման անհրաժեշտություն զգացվում է։

3) Ոչ ծանր հանցանքների կամ զանցանքների համար, ելնելով հասարակական կարգի ապահովման շահերից, հանցավորներին ենթարկել երկու շաբաթվա կալանքի կամ 25 ռ. տուգանքի։

4) Անցագրեր տալ բնակիչներին օկրուգից կամ մարզից տեղափոխվելու համար։

5) Առաջին կարգի անհրաժեշտ մթերքների նկատմամբ սահմանել գների մինիմում։

6) Թույլատրել կրոնական և ավանդական տոնակատարություններ և այլն։

Օկրուգի պետի համար սահմանված էր երկու օգնական՝ վարչատնտեսական և ոստիկանական գործերի գծով։ Դատական և այլ գործերի համար օկրուգի պետին տրամադրվում էր 3 մասնագետ օգնական։

Բազմաթիվ գրագրությունները օկրուգների պետերի և նրանց վերադասների ու ստորադասների միջև վկայում են, որ նրանք ըստ էության ձեռնամուխ էին եղել իրենց ֆունկցիոնալ պարտականությունների կատարմանը[21]։

բ) Վերը նշեցինք, որ օկրուգները տրոհվում էին տեղամասերի։ Համաձայն հրահանգի՝ տեղամասերի (участок) պետերի վրա պարտականություն էր դրվում ուշադրություն դարձնել դրամական միջոցների, հարկերի ժամանակին գանձմանը, հասարակական հավաքներում կարգ ու կանոնի պահպանմանը, դատական վճիռների անշեղ կատարմանը։ Տեղամասի պետը իր հայեցողությամբ գործերը հանձնում էր դատարանին, հետևում դպրոցական գործին և առևտրական կետերի, հատկապես հացի խանութների նորմալ աշխատանքներին։ Տեղամասերի պետերը պետք է խիստ հսկողություն սահմանեին անտառների, ճանապարհների, կամուրջների պահպանման վրա, քաղաքների ու գյուղերի սանիտարական դրության, վիճակագրության վրա։ Սրանք պետք է ի հայտ բերեին ամեն տեսակի հանցագործներին, քննություն նշանակեին նրանց նկատմամբ, իսկ առավել վտանգավոր հանցանքների մասին անհապաղ ղեկուցեն օկրուգի պետին։ Վարչական տույժեր նշանակելու հարցում օկրուգի պետը օգտվում էր գումարտակի հրամանատարի, իսկ տեղամասի պետը՝ վաշտի հրամանատարի իրավունքներով[22]։ Տեղամասի պետն իրավունք ուներ մեկ շաբաթվա կալանքի կամ 10 ռ. տուգանքի ենթարկել այն անձանց, ովքեր խախտել էին հասարակական կարգը, սպառնացել քաղաքացիների կյանքի անվտանգությանը կամ կատարել այլ կարգի հանցանքներ[23]։

գ) Տեղամասերն իրենց հերթին բաժանվում էին գյուղական ժողովների, որոնց գլուխ կանգնած էին գյուղական ավագն ու նրա կատարածուն, գյուղական ավագի օգնականն ու նրա կատարածուն։ Փոքր բնակավայրերում, ուր հնարավոր չէր գյուղական ժողով կամ ավագ նշանակել, նշանակվում էին տասնապետ, հարյուրապետ, հարկահավաք և գյուղական գրագիր։ Գյուղական վարչության կառուցվածքում նախատեսվում էին նաև այլ պաշտոնատար անձինք, այդ թվում նաև գյուղական փոստատարը։

---

21 Այդ մասին առանձնապես հարուստ փաստական նյութ է կուտակված Վրաց. ՍՍՀ ԳԿԱ, ֆ. 520, ց. 1, գ. № № 36, 37, 38, 62, 79, 87, 133, 136, 138, 140, 141 և այլն։

22 ЦГВИА, ф. 2168. оп. 1, д. 268, л.л. 21 — 22.

23 Նույն տեղում։

Այսպիսով, պետք է ընդգծել ցարական չինովնիկների «բարեխղճությունը», որոնք ամենայն մանրամասնությամբ մշակել էին իրենց նոր տիրապետությունների վարչա-տնտեսական կանոնագիրքը՝ սահմանված համարյա ռազմական ոգով։

Գեներալ-նահանգապետ, մարզապետ, օկրուգի պետ, տեղամասի պետ, գյուղական ժողովի պետ՝ այսպիսին էր այն հիերարխիան, որ նախատեսել էին ցարական պետական գործիչները նոր նվաճված երկրամասերը ղեկավարելու համար։

4. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԲԱՆԱԿԻ ՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌՊԱՐԵՁՈՒՄ

Ճանապարհների բացակայությունը, որոշ շրջանների բացարձակ անմարդաբնակ դառնալը, գաղթականության ստվայությունը և նման այլ հարցեր ստիպում էին կառավարող օրգաններին ամենայն լրջությամբ զբաղվել բնակչության ու բանակի մատակարարման կազմակերպման հարցերով։ Այդ հարցերի որոշման համար գեներալ-նահանգապետին կից ստեղծվել էր մատակարարման և տնտեսական բաժին, որի հիմնական պարտականությունն էր ամեն կերպ նպաստել բանակի ու բնակչության նորմալ մատակարարման գործին։ Մատակարարման և տնտեսական բաժինն ուներ հետևյալ կառուցվածքը.

1. Տնտեսական և մատակարարման գծով խորհրդակցություն գեներալ-նահանգապետի նախագահությամբ։

2. Բաժնի պետ, որը և ղեկավարում էր ընթացիկ բոլոր գործերը՝ գեներալ-նահանգապետի ցուցումների հիման վրա։

Տնտեսական և մատակարարման բաժնի պետի վրա էին դրված մի շարք կոնկրետ պարտականություններ։

ա) Համապատասխան միջոցառումների մշակումը և այդ մասին գեներալ-նահանգապետին զեկուցելը։

բ) Օկրուգների պետերի հետ անմիջական կապերի մեջ մտնելը՝ մատակարարման հարցը կազմակերպելու համար։

գ) Անհրաժեշտ տեղեկություններ կենտրոնացնելը, մատակարարման գործի կազմակերպման մասին հայտեր ներկայացնելը և նրանց կատարմանը հետևելը։

դ) Իր անձնական պատասխանատվությամբ հատուկ միջոցների դիմելը բանակի ու բնակչության մատակարարման գործի կազմակերպման ուղղությամբ և այդ մասին զեկուցելը գեներալ-նահանգապետին։

Պետք է ընդգծել, որ մատակարարման և տնտեսական հարցերը կովկասյան ռազմաճակատի համար ունեին առանձնահատուկ նշանակություն, ուստի գլխավոր հրամանատարությունը և փոխարքայությունը դրանց տալիս էին շատ մեծ նշանակություն։

Բավական է ասել, որ գեներալ-նահանգապետին կից մշտապես գործում էր հատուկ խորհրդակցություն, որի կազմի մեջ մտնում էին ինքը՝ գեներալ-նահանգապետը, որպես խորհրդակցության նախագահ, իր տեղակալները, շտաբի պետը, տնտեսական մատակարարման բաժնի վարիչը, գլխավոր մատակարարման վարչության ներկայացուցիչը, փոխարքայության գրասենյակի ներկայացուցիչը, հողագործության մինիստրության ներկայացուցիչը, դրա-

սենյակի պետը, ճանապարհների հաղորդակցության վարչության ներկայացուցիչը, վերահսկիչներ, ինժեներ տեսուչներ, ռազմական-սանիտարական տեսուչը, ռազմական-անասնաբուժական տեսուչը, մատակարարման գծով օկրուգի շտաբի ավագ հանձնարարություններ կատարողը, գաղթականներին օգնող կոմիտեի, կարմիր խաչի, գյուղական կոմիտեների, քաղաքների միության ներկայացուցիչները և հասարակական բազմաթիվ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ։ Հարցերի քննարկման ժամանակ անհրաժեշտության դեպքում հրավիրվում էին նաև համապատասխան մասնագետներ։

Ինչպես երևում է վերը նշածից, խոսքը վերաբերում էր այնպիսի մի օրգանի ստեղծմանը, որն ընդգրկում էր տնտեսական կյանքի համարյա բոլոր բնագավառների ղեկավարությունը։

Գեներալ-նահանգապետին կից ստեղծված այդ լայն ներկայացուցչական խորհրդակցությունը իր միջից ընտրում էր գործադիր ընթացիկ ղեկավարությունն իրականացնող օրգան, որը կոչվում էր բյուրո՝ մատակարարման-տնտեսական բաժնի վարիչի նախագահությամբ։

Օկրուգների պետերի նախագահությամբ նույնպես ստեղծվում էին հատուկ կոմիտեներ տնտեսական մատակարարման հարցերը օկրուգներում լուծելու համար։ Այդ կոմիտեներում գործում էին տնտեսական, ֆինանսական, հսկողական համապատասխան տեսուչները և նրանց քարտուղարները, որոնք օկրուգի պետի ղեկավարությամբ մշակում, կազմակերպում և ապահովում էին մատակարարման գործը տվյալ օկրուգի սահմաններում։

Կարելի է բերել տասնյակ օրինակներ, որոնք վկայում են այն մասին, որ, իրոք, օկրուգների պետերն իրենց առօրյա գործունեության ընթացքում ձեռնամուխ են եղել դեղատների, սանիտարական աշխատողների դասընթացների կազմակերպման գործին, առանձնացվել են գինվորական ջոկատներ քարուքանդ եղած հանքահորերը վերականգնելու համար[24]։

Այսպիսով, կովկասյան փոխարքայությունը և կովկասյան բանակի գլխավոր հրամանատարությունը նոր նվաճած շրջաններում ձեռնարկում էին այն, բոլոր հնարավոր միջոցառումները, որոնք կարող էին նպաստել նվաճած երկրամասերի տնտեսական նորմալ կյանքի վերականգնմանը։ Չի կարելի ասել, թե այն, ինչ նշված էր կանոնադրությունում կամ հրահանգում, լիովին կատարվում էր, սակայն փաստը մնում է փաստ, որ բանակի հրամանատարությունը և պետական ղեկավարման օրգանները ձգտում էին տարբերական կարգ ու կանոն հաստատել նվաճած շրջաններում, որը մի քայլ առաջ էր համեմատած անարխիայի ու կամայականության հետ։

ՄԻԼԻՑԻԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ՕԿՐՈՒԳՆԵՐՈՒՄ

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո ստեղծված պայմաններում, երբ գրավված վիլայեթներում դեռևս տիրում էին խառնաշփոթություն, ազգամիջյան ընդհարումներ, երբ լեռներում ու անտառներում դեռ գործում էին քրդական հրոսակները, նոր ստեղծվող ռուսական վարչական օրգանների համար ամենաառաջնահերթ խնդիրներից մեկը միլիցիայի կազմակերպումն էր։ Ժամանակավոր կառավարության ստեղծումից առաջ նախա-

[24] Այդ բոլորի մասին տե՛ս Վրաց. ՍՍՀ ՊԿԱ. ֆ. 520, ց. 1, գ. № 216, թ. թ. 6, 7, գ. № 17, թ. 12—13 և այլն։

տեսվում էր սկզբնական շրջանում ունենալ 9000 միլիցիոներ, սակայն, ինչպես երևում է գեներալ-նահանգապետ, գեներալ Ավերյանովի զեկուցագրից, 1917 թ. գարնանը հազիվ կարողացել են հավաքագրել 3000 հոգի[25]։

Ցածր վարձատրությունը և բանակի զինվորների քաղաքական տրամադրությունները աննպաստ էին միլիցիայի կազմի հավաքագրման համար։

Գեներալ Ավերյանովն իր զեկուցագրում, հաշվի առնելով գրաված շրջանների ներքին դրությունը, առաջարկում է ստեղծել միլիցիա հետևյալ կառուցվածքով.

ա) Հետևակ — քաղաքների, գյուղերի բնակչության անվտանգության և կարգ ու կանոնի համար։

բ) Հեծյալ միլիցիա — ճանապարհների, կամուրջների պահպանման, փոխադրամիջոցին և փոստին ուղեկցելու համար։

գ) Խառն միլիցիա (հեծյալ և հետևակ) — բանդիտիզմի, թալանի և թշնամական տարրերի հարձակումների դեմ պայքարելու համար։

դ) Ռեզերվ վերը նշված երեք կարգի միլիցիայի խմբերը համալրելու համար։

Բոլոր 4 մարզերը (Վանի, Խնուսի, Էրզրումի, Պոնտոսի) պետք է ունենային հիշյալ 4 կարգի միլիցիայի խմբերը։ Մարզերի միլիցիայի պետերը ենթարկվում էին մարզերի կոմիսարներին։ Իր ներքին կառուցվածքով միլիցիան պիտի բաժանվեր տասնյակների, հիսնյակների և հարյուրյակների՝ իրենց պետերով հանդերձ։

Յուրաքանչյուր մարզի համար նախատեսվում էր ունենալ՝

միլիցիայի պետ —1
օղնականներ —4
հարյուրապետեր —9
հիսնապետեր —15
տասնապետեր —106
շարքային միլիցիոներներ —1174

ընդամենը 1309[26]։

Իսկ բոլոր 4 մարզերը, ըստ Ավերյանովի հաշվարկումների, պետք է ունենային միլիցիայի պետեր՝ 4, նրանց օղնականներ՝ 16, հարյուրապետեր՝ 36, հիսնապետեր՝ 60, տասնապետեր՝ 424 և միլիցիոներներ՝ 4696, ընդամենը՝ 5206 մարդ[27]։

Ելնելով այդ հաշվարկումներից, գեներալ Ավերյանովը իր զեկուցագրում նշում է նաև պահանջվող զումարի չափը, որը հասնում է մոտ 7.473.400 ռուբլու։

* * *

Գեներալ-նահանգապետության ստեղծումը իր բոլոր ատրիբուտներով ցարական կառավարության կողմից մի քայլ էր կովկասյան բանակի կողմից օսմանյան կայսրությունից գրաված շրջաններում պետական կարգ ու կանոն ստեղծելու և այդ շրջանները կայսրության անբաժան մասը դարձնելու ճանապարհին։

---

25 ЦГВИА, ф. 2003, оп. 4, д. 19, л.л. 172 — 192.
26 Նույն տեղում, թ. 175։
27 Նույն տեղում։

Միապետական ռեակցիոն գեներալների և մինիստրների կողմից առաջ քաշած ընդհանուր դրույթներն ու միջոցառումները արտաքուստ կատարվում էին բոլոր ցեղերին ու ժողովուրդներին հավասար վերաբերմունք ցույց տալու լոզունգի տակ։ Սակայն այդ քողի տակ թաքնված էր շատ մեծ գաղտնիք և անարդարություն։ Հայտնի է, որ Արևմտյան Հայաստանում կամ ամբողջ օսմանյան կայսրության մեջ հայերը իրավական տեսակետից հավասար պայմաններում չէին գտնվում։ Նրանց հողերն ու ունեցվածքը մասսայաբար կողոպտվում էին։ 1915 թ. Վանի վիլայեթում, Մուշում և Բիթլիսում տասնյակ հազարավոր հայեր բնաջինջ էին արված։ Ոչ մի հրաման կամ օրենսդրական ակտ չէր կարող մոգական այնպիսի ուժ ունենալ, որ բոլոր երդվյալ թշնամիներին անմիջապես եղբայրներ դարձներ։ Իրավացի էր Վանի նահանգապետ Արամ Մանուկյանը, երբ գեներալ Նիկոլաևից, Օգանովսկուց և Յուդենիչից պահանջում էր ամենից առաջ օրենքով պատժել աղատ շրջող հարյուրավոր մարդասպանների, երաշխիքներ ստեղծել հայերի նկատմամբ հետագա բռնությունների բացառման համար և հետո միայն կիրառել հավասարության թեզը։ Ըստ էության, Նիկոլայ Նիկոլաևիչի Սազոնովին դրած նամակում առաջ քաշած «բոլորը պետք է օրենքի առաջ հավասար լինեն» թեզը ֆիկցիա էր, որովհետև դրանով փաստորեն օրինականացվում էր արդեն իսկ գոյություն ունեցող անհավասարությունը։ Ոչ ոք չի կարող հայերին սեղադրել նրանում, թե իբր նրանք արտոնյալ վիճակ են պահանջել իրենց համար մյուս ազգերի նկատմամբ. դա կլիներ առնվազն զրպարտություն ու անբարեխղճություն։ Սակայն նրանք իրավունք ունեին պահանջելու, որպեսզի գործնականում դատաստան տեսնվի դահիճների հետ, հայերին վերադարձվեն իրենց շենքերը, հողերը, անգամ թաքցրած կանանց ու երեխաներին, զինաթափ արվեն քուրդ հրոսակախմբերը և հետո միայն խոսք բացվի ներքին կարգ ու կանոնի մասին։ Բայց Նիկոլայ Նիկոլաևիչին կամ Յուդենիչին այդ բոլորը բավականին խորթ էին։ Նախ՝ ըստ էության նրանց այդ բոլորը չէր հետաքրքրում և դա նրանց գործունեության ու պաշտոնական դիրքի շրջանակներում բոլորովին երկրորդական հարց էր, իսկ մյուս կողմից՝ նրանք բոլորովին էլ մտադիր չէին մտահոգվել և հակադրվոր քննություններ նշանակել մեղավորներին դատելու ու պատժելու համար։

Հայ ժողովուրդը նույնիսկ այդ պայմաններում աղետից դուրս գալու միակ հույսը, չարիքի փոքրագույնը համարում էր ռուսական հրամանատարության կողմից սահմանված օկուպացիոն ռեժիմը թեկուզ և այն պարզ պատճառով, որ այդ ռեժիմը մնացած հայ բնակչությանը փրկում էր ֆիզիկական բնաջնջումից։

О ПОЛИТИКЕ ЦАРИЗМА В РАЙОНАХ, ЗАВОЕВАННЫХ КАВКАЗСКОЙ АРМИЕЙ В 1914 — 1917 гг.

А. О. АРУТЮНЯН

(Резюме)

В годы первой мировой войны русская Кавказская армия наголову разбила турецкие войска в ряде ожесточенных сражений, особенно в Сарыкамышском, Алашкертском и Эрзерумском, и захватила огромную территорию. Такие стратегически важные пункты, как города Трапезунд, Эрзерум, Мамахатун, Байбурт, Эрзинджан, Ван, Муш, Битлис и другие, оказались в тылу действующей русской армии.

Так как царское правительство и высшее командование рассматривали завоеванные территории в качестве потенциальной составной части империи, то естественно возник вопрос об организации управления (колонизации) занятых районов.

Вопрос этот был из весьма сложных. Необходимо было учитывать интересы и отношения между различными народами и племенами, населявшими эти территории, а также столкновение интересов великих держав на Ближнем Востоке. Еще до начала и особенно в ходе войны шла оживленная переписка о формах управления в Западной Армении и других районах Оттоманской империи, занятых русскими войсками.

В разработке общих принципов этой сложной проблемы принимали участие министр земледелия Кривошеин, министр иностранных дел Сазонов, наместники на Кавказе граф Воронцов-Дашков, великий князь Николай Николаевич, командующий действующей Кавказской армией генерал Юденич, командиры корпусов и многие другие гражданские и воинские чины.

5 июня 1916 года, в итоге переговоров и рекомендаций, Николай II утвердил «Временное положение об управлении областями Турции, занятыми по праву войны», а также ряд инструкций, вытекающих из этого положения.

На занятых районах было создано генерал-губернаторство во главе с генерал-губернатором. Оно состояло из четырех областей: Ванской, Хнысской, Эрзерумской и Понтийской. Области делились на округи (их было 29), округи — на участки, а последние на городские и сельские общины.

Во главе этих административных делений стояли соответствующие начальники (главным образом военные), для которых в стиле воинских уставов был разработан круг функциональных обязанностей и прав. Правительство и военное командование проявили исключительную заинтересованность в быстром укомплектовании органов милиции, так как жизненно важное значение приобретала борьба с бандитизмом, грабежом и произволом турецких, отчасти и курдских вооруженных банд, угрожавших нормальному снабжению, парализовавших внутреннюю жизнь и препятствовавших действиям армии. Раскрывая колонизаторскую политику царизма на Ближнем Востоке, автор вместе с тем усматривает в мероприятиях царского правительства и русского командования шаги, направленные на установление государственного порядка и обеспечение личной безопасности населения. В частности, для армянского народа это было наименьшим злом по сравнению с турецким гнетом и вандализмом.